ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1, հեռ. +(374 11) 514-240

№ 2/ 217 02.08.2019թ.

Ինֆորմացիայի ազատություն
Կենտրոն ՀԿ նախագահ
Շուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք, որ
1. 2014 թվականին Երևանի կոշտ թափոնների կառավարման միջազգային մրցույթ չի անցկացվել, հետևաբար տվյալների տրամադրումն անհնարին է:
2. Նույն պատճառով հնարավոր չէ տրամադրել նաև պայմանագրի պատճե:
3. Երևանի քաղաքապետարանի կողմից «Սանիթեք Սարլ» ընկերության համար արտաքին կամ ներքին աուդիտ չի պատվիրվել:
4. Երևանի քաղաքապետարանի և «Նուբարաշենի աղբավայր» ՍՊԸ միջև կնքված պայմանագրի պատճեն տրամադրվում է առձեռն: Պայմանագրի վաղեմության ժամկետի պատճառով այլ լիարժեք ընթեռնելի չէ, ինչի համար հայցում ենք ձեր ներողամտությունը:
5.Երևանի քաղաքապետարանի և ընկերության միջև կնքված պայմանագրի հավելված 1-ի 6.1.4 կետով նախատեսված է, որ լիազորված պաշտոնատար անձը կարող է Կապալառուի որակի աուդիտ անցկացնել:

Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում նախատեսվում է Նուբարաշենի առկա աղբավայրին հարակից տարածքում կառուցել նոր աղբավայր,

ինչպես նաև փակել Նուբարաշենի և Աջափնյակի գործող աղբավայրերը (այսուհետ՝ Ծրագիր)։ Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 26 մլն եվրո (8 մլն եվրո վարկ՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ), 8 մլն եվրո վարկ՝ Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ), 8 մլն եվրո դրամաշնորհ՝ ԵՄ, 2 մլն եվրո դրամաշնորհ՝ Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերություն (E5P))։

Հայաստանի Հանրապետության և ՎԶԵԲ-ի միջև 8 մլն եվրո վարկային համաձայնագիրը կնքվել է 2015 թվականի դեկտեմբերի 11-ին։

Հայաստանի Հանրապետության և ԵՆԲ-ի միջև 8 մլն եվրո վարկային համաձայնագիրը կնքվել է 2016 թվականի հոկտեմբեր 16-ին։

ԵՄ-ի կողմից 8 մլն. եվրո դրամաշնորհը տրամադրվել է 2016 թվականի սեպտեմբերի 16-ին։ Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերություն (E5P) կողմից 2 մլն եվրո դրամաշնորհը տրամադրվել է 2017 թվականի դեկտեմբերի 1-ին։

Վարկը որպես ենթավարկ տրվել է «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ին։ Նշենք նաև, որ Երևանի քաղաքապետարանի կողմից «Սանիթեք Սարլ» ընկերության համար արտաքին կամ ներքին աուդիտ չի պատվիրվել։ Երևանի քաղաքապետարանի և ընկերության միջև կնքված պայմանագրի հավելված 1-ի 6.1.4 կետով նախատեսված է, որ լիազորված պաշտոնատար անձը կարող է Կապալառուի որակի աուդիտ անցկացնել։

Հ.Գ- Ի ապացույց այն փաստի, որ տեղեկատվության վարչությունը նույնաբովանդակ նամակ նախկինում ստացել էր նաև «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից, որի պատասխանի պատճենը տրամադրում ենք Ձեզ։ Ի դեպ, ՀԿ-ի տնօրենը նշել է, որ մեր պատասխանը օրեր առաջ տեղի ունեցած էներգամատակարարման խափանման պատճառով անհետացել էր տեղեկատվության վարչության արխիվային բազայից։ Պատասխանը մեզ են տրամադրել աշխատակազմի այն վարչությունները, որոնց գործառույթների շրջանակում է եղել հարցումը։ Նաև նշենք, որ պատասխանի ամբողջական տարբերակը նախկինում ուղարկվել էր լրագրողին, և վերջինս իր անունից շնորհակալություն էր հայտնել։ Ավելի ուշ, տեղեկատվության վարչությանը հասցեագրվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի տառացիորեն նույնաբովանդակ նամակը։ Հուսով ենք, որ Ռադիո Ֆրանսի լրագրողը գոնունակ կլինի նաև 2-րդ նույնատիպ պատասխանից, և, ամենակարևորը՝ նույն հարցումը որևէ այլ կազմակերպության միջոցով այլևս ու երբեք չի հասցեագրվի տեղեկատվության վարչությանը։